«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ JCB 3CX ԷՔՍԿԱՎԱՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-26/24-03/72

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ՓԲԸ) 03/72 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«06» 12 2024թ. 20 р

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ–ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 06.05.2024թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արգամ Հարությունյանի, որը գործում է «ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **JCB 3CX էքսկավատորի տեխնիկական սպասարկման և նորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա)Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, պայմանագրի (գործարքի) վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում (Հիմք՝ ՀՀ կառավարության 17 մարտի 2022 թվականի N 319-Ն որոշում):

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի

սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,	0010, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2Ա շենք,
Հ/Հ 1930000199200100	Հ/Հ 1930040338440100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	«Կոնվերսբանկ» ՓԲԸ,
ՀՎՀՀ 04401874,	ՀՎՀՀ 00108186
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	**Հեռ.** 099 09 09 02
Հեռ.՝ 20-04-91, 30-20	
E-mail: anpp@anpp.am	**E-mail:** allengroup@mail.ru
Ս. Մաթևոսյան	**Ա. Հարությունյան**
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
06.12. 2024թ. կնքված
N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-26/24-03/72 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
ջ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130	JCB 3CX մակնիշի էքսկավատորի հետերաշխիքային մասնագիտական տեխնիկական սպասարկումը և նորոգումը կատարել համաձայն կից ներկայացված ծավալաթերթի(**Հավելված 1.1՝ կցվում է):**	ընտիրամ	**1500000**	1	«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի վարչական տարածք կամ ոչ հեռու, քան 50 կմ հեռավորությամբ	Պայմանագրի կնքման օրվանից **մեկ տարի (365 օր) ժամկետով**

Լրացուցիչ պայմաններ՝

1. Մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելու կարգը՝ համաձայն ՀՀ Կառավարության №526 առ 04.05.2017թ. որոշման 32-րդ կետի 23-րդ ենթակետի:
2. **Պայմանագրի առավելագույն գին է սահմանվել՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**
3. Տեխնիկական սպասարկումը իրականացնել համաձայն սերվիսային գրքույկի:
4. Ծառայությունը մատուցել ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ներառյալ փոխարինվող նոր՝ չօգտագործված պահեստամասերի և նյութերի արժեքները:
5. Վճարում կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:
6. Մասնակցին ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության տրամադրման ժամկետը՝ 10 (տաս) աշխատանքային օր:

Ծանոթություն՝ Պայմանագրի կառավարիչ՝ Ա. Գրիգորյան, հեռ. 010282960, E mail ashot.grigoryan@anpp.am

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

.....
Կ.Տ.
Ս. Մաթևոսյան

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԼԼԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

.....
Կ.Տ.
Ա. Հարությունյան

06.12.

Հավելված N 1.1
2024թ. կնքված
***N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-26/24-03/72** ծածկագրով պայմանագրի*

Ծավալաթերթ-գնացուցակ

	Անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավոր գին
			հատ	***ՀՀ դր***
	Ծառայություններ			
1	Ճանապարհածախս	կմ	1	300
2	Տեխսպասարկում SU-1 (յուրաքանչյուր 250 մ/ժ)	հատ	1	35 000
3	Տեխսպասարկում SU-2 (յուր. 500 մ/ժ)	հատ	1	45 000
4	Տեխսպասարկում SU-3 (յուր. 1000 մ/ժ)	հատ	1	80 000
5	Տեխսպասարկում SU-4 (յուր. 2000 մ/ժ)	հատ	1	150 000
6	Փականագործի ծառայություն	ժամ	1	18 000
7	Փականագործի մինիմալ ծառայություն	հատ	1	30 000
8	Էլեկտրիկի ծառայություն	ժամ	1	20 000
9	Էլեկտրիկի մինիմալ ծառայություն	հատ	1	30 000
10	Վառելիքի մղիչի հանում տեղադրում	հատ	1	80 000
11	Փոխանցման տուփի հանում տեղադրում	հատ	1	200 000
12	Շարժիչի հանում տեղադրում	հատ	1	200 000
13	Շարժիչի վերանորոգում	հատ	1	800 000
14	Կամրջակի քանդում հավաքում	հատ	1	800 000
15	Հիդրոմուրճի վերանորոգում	հատ	1	800 000
16	Հիդրոմուրճի ազոտի լիցքավորում	հատ	1	50 000
	Պահեստամասեր			
17	Շարժիչի յուղ 15W40	լիտր	1	3 500
18	Հիդրավլիկ յուղ VG46	լիտր	1	3 500
19	Տրանսմիսիոն յուղ 80W90	լիտր	1	5 000
20	Տրանսմիսիոն յուղ 85W90	լիտր	1	5 000
21	Տրանսմիսիոն յուղ 10W30	լիտր	1	5 000
22	Անտիֆրիզ	լիտր	1	3 500
23	Քսայուղ 18կգ	հատ	1	120 000
24	Քսայուղ 15կգ	հատ	1	100 000
25	Քսայուղ 400գր	հատ	1	5 000
26	Քսայուղ հիդրոմուրճի 400գր	հատ	1	8 000
27	Քսայուղ տելեսկոպիկ հանգույցների 5կգ	հատ	1	100 000
28	Քսայուղ տելեսկոպիկ հանգույցների 400գր	հատ	1	10 000
29	Շարժիչի յուղի զտիչ	հատ	1	8 000
30	Վառելիքի զտիչ	հատ	1	10 000
31	Օդի առաջնային զտիչ	հատ	1	15 000
32	Օդի երկրորդային զտիչ	հատ	1	10 000
33	Օդի զտիչների կոմպլեկտ	կ-կտ	1	25 000
34	Խցիկի օդի զտիչ	հատ	1	10 000
35	Օդորակիչի օդի զտիչ	հատ	1	10 000
36	Տրանսմիսիոն յուղի զտիչ	հատ	1	18 000
37	Հիդրավլիկ յուղի զտիչ	հատ	1	25 000
38	Վառելիքի հավաքական կոշտ զտման զտիչ	հատ	1	30 000
39	Շերեփի ատամ	հատ	1	10 000

40	Շերեփի անկյունային ատամ	հատ	1	15 000
41	Հեղյուս մանեկ	հատ	1	1 500
42	Յուղիչ	հատ	1	1 000
43	Շերեփի դանակ	հատ	1	200 000
44	Քփացուցիչ	հատ	1	5 000
45	Քփացուցիչ կարգավորող	հատ	1	15 000
46	Քփացուցիչ	հատ		5 000
47	Արգելակման կոճղակ	հատ	1	12 000
48	Կողային հայելի	հատ	1	15 000
49	Հայելու ամրակ	հատ	1	12 000
50	Առջևի լուսարձակ	հատ	1	100 000
51	Շարժափոկի ձգան	հատ	1	55 000
52	Կանգազդանշանային պաշտպանիչ	հատ	1	15 000
53	Կամրջակի կիսալիսեռ	հատ	1	135 000
54	Կամրջակի կիսալիսեռ	հատ	1	135 000
55	Շարժիչի փոկ	հատ	1	15 000
56	Ջրի պոմպ	հատ	1	80 000
57	Վառելիքի բարձր ճնշման մղիչ	հատ	1	1 000 000
58	Վառելիքի զտիչի ռետինե կոմպլեկտ	հատ	1	15 000
59	Ընդարձակման բաք	հատ	1	30 000
60	Ընդարձակման բաքի կափարիչ	հատ	1	8 000
61	Ջրի ռադիատոր	հատ	1	350 000
62	Թերմոստատ	հատ	1	25 000
63	Թերմոստատի պատյան	հատ	1	13 500
64	Գազի ճոպան	հատ	1	18 000
65	Բոցամուղ	հատ	1	100 000
66	Շարժիչի բարձակ	հատ	1	13 500
67	Մեխանիկական պոմպ	հատ	1	20 000
68	Կամրջակի մաս	հատ	1	100 000
69	Ձգան	հատ	1	50 000
70	Արգելակման ֆրիկցիոներ	կ-կտ	1	4 500
71	Արգելակման ռետինե խտարար	հատ	1	15 000
72	Կամրջակի դիֆերենցիալ	հատ	1	100 000
73	Կամրջակի սաթելիտների կոմլեկտ	կ-կտ	1	100 000
74	Տափօղակ դիֆերենցիալի	հատ	1	16 000
75	Խաչուկ	հատ	1	15 000
76	Կարդանի հեղյուս	հատ	1	1 800
77	Խաչուկի ամրակ	հատ	1	5 000
78	Ռեդուկտորի ատամնանիվների զույգ	հատ	1	135 000
79	Անվադող R26	հատ	1	300 000
80	Անվադող R24	հատ	1	300 000
81	Անվադող R18	հատ	1	300 000
82	Առանցքակալ	հատ	1	50 000
83	Անվադողի մանեկ	հատ	1	2 700

84	Կամրջակի ռետինե խտարար	հատ	1	35 000
85	Խտարար	հատ	1	22 500
86	Անվակունդի պատյան	հատ	1	135 000
87	Կարդանային լիսեռ	հատ	1	180 000
88	Բաժանարարի ռետինե խտարար	հատ	1	27 000
89	Խտարարների կոմպլեկտ	կ-կտ	1	65 000
90	Յուղի ճնշման կարգավորիչ	հատ	1	55 000
91	Խտարար	հատ	1	32 000
92	Պատյան	հատ	1	126 000
93	Հիդրավլիկ գլան	հատ	1	550 000
94	Մետաղական փական	կ-կտ	1	13 500
95	Բաժանարար դիմացի	հատ	1	1 400 000
96	Հիդրավլիկ մղիչ	հատ	1	630 000
97	Հիդրոմարդկող	հատ	1	630 000
98	Բաժանարարի ռետինե խտարար	կ-կտ	1	20 000
99	Գեներատոր	հատ	1	130 000
100	Թողարկիչ	հատ	1	150 000
101	Շաժիչի յուղի ճնշման տվիչ	հատ	1	15 000
102	Ջրի ջերմաստիչանի տվիչ	հատ	1	15 000
103	Փոխանցման յուղի ջերմաստիչանի տվիչ	հատ	1	18 000
104	Հետևի կանգ լուսարձակ	հատ	1	15 000
105	Ստոպի ապակի	հատ	1	6 000
106	Կայծման փական	հատ	1	18 000
107	Էլեկտրական փական	հատ	1	25 000
108	Վառան	հատ	1	72 000
109	Մատ	հատ	1	31 500
110	Շերեփ 350մմ	հատ	1	450 000
111	Շերեփ 600մմ	հատ	1	500 000
112	Շերեփ 350մմ	հատ	1	450 000
113	Տափօղակ	հատ	1	9 000
114	Փողրակ	հատ	1	75 000
				13 682 800

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան
L.S.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԼԼԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Մ. Հարությունյան
L.S.

06.12. Հավելված N 2
2024թ. կնքված
N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-26/24-03/72 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024-2025թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*													
			2024թ	2025թ												Ընդամենը
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	50111130	JCB 3CX էքսկավատորի տեխնիկական սպասարկում և նորոգում	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	**1500000**

**Վճարումը կկատարվի հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, պայմանագրի (գործարքի) վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում (հիմք՝ ՀՀ կառավարության 17 մարտի 2022 թվականի N 319-Ն որոշում):*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԼԼԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Ա. Հարությունյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն